«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԵՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցություն

Հետազոտության թեման՝ *Խոսքային հաղորդակցություն*

Առարկան՝ *Մայրենի*

Հետազոտող ուսուցիչ՝ *Սյուզաննա Բաբայան*

Ուսումնական հաստատություն՝ *Արտաշատի հ.1 հիմն. դպրոց*

ԹԵՄԱՆ՝ Խոսքային հաղորդակցություն

ՀԱՐՑԸ՝ Ի՞նչ կարևորություն ունի սովորողների խոսքն ու հաղորդակցությունը մայրենիի դասաժամերին

ԿԱՏԱՐՈՂ՝ Սյուզաննա Բաբայան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------էջ 5

Շփում և հաղորդակցություն----------էջ 7

Հաղորդակցության տեսակները----------էջ 9

Խոսքային գործունեություն----------էջ12

Խոսքային ժանրեր----------էջ16

Եզրակացություն----------էջ21

Օգտագործված գրականության ցանկ----------էջ22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագրերը կարևորում են աշակերտների խոսքի զարգացումը, մասնավորապես հաղորդակցական կարողությունների ձևավորման խնդիրների տեղի և դերի որոշման հարցում: «Մայրենի» առարկայի նպատակն է առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացումն է, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը: Կապակցված խոսքի հմտությունների ձևավորումը, բառապաշարի հարստացումը, աշակերտների խոսքի լեզվական – քերականական կառուցվածքի մշակումը պետք է ծառայեն այս գլխավոր նպատակին՝ մայրենիով գրագետ և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Տարրական դասարաններում կարևորելով հարցի լրջությունը, տարիներ ի վեր ուսուցիչներին խորհուրդ է տրվել մայրենիին հատկացված ժամաքանակից՝ իբրև անհրաժեշտ բաղադրիչ, շաբաթական ժամերից մեկը հատկացնել աշակերտների խոսքային կարողությունների զարգացման խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով «Խոսք և հաղորդակցում»: Սակայն դեռևս լավ մշակված չէ այս բաղադրիչի դասավանդման մեթոդիկան:

Լեզվի դասն առաջին հերթին աշակերտներին խոսքի և մտածողության զարգացման դաս է: Պետք է նկատի ունենալ նաև, որ արդյունավետ հաղորդակցման կարողությունների նպատակով խոսքի զարգացումը միայն մայրենիի դասերի համար ու դրանց միջոցով չէ, որ տեղի է ունենում: Մայրենի լեզվի ուսուցման մասին խոսելիս պետք է հստակ տարբերակել հարցերի երկու կողմը՝ մայրենի լեզուն՝ որպես կրթության լեզու:

Կրթության լեզուն իմացության և ճանաչողության հիմքն է: Մայրենի լեզուն օտար լեզուների հետ միասին նպաստում է սովորողների բազմալեզվության զարգացմանը, մասնավորապես խոսքի զարգացման միջոցով շփման և հաղորդակցության մշակույթի ձևավորմանը:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների /կարդալ, գրել, լսել, խոսել/ ուղղությամբ կազմակերպված համակարգված և նպատակամեդ աշխատանքն է: Այս ժամերի արդյունավետ կազմակերպումը նպաստում է հաջողությամբ իրականացնել

լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառութային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը:

Խոսքի զարգացումը՝ ներառյալ բարեկիրթ խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը, պետք է լրացվի մեկ այլ խնդրով, ձևավորել այնպիսի անձ, որը կարողանա ճիշտ կողմնորոշվել կոնկրետ խոսքային իրադրության մեջ, իր խոսքը կառուցել այդ իրադրությանը համապատասխան, հաշվի առնելով հաղորդակցման նպատակը, այսինքն արդյունավետ հաղորդակցվել: Արդյունավետ հաղորդակցումը ենթադրում է ճիշտ, արդյունավետ և տեղին խոսք: Անշուշտ, դա գրական լեզվի նորմերին համապատասխան խոսքն է: Դա բավական չէ: Պետք է այնպես կառուցել խոսքը, որ հասնել հաղորդակցական նպատակին: Օրինակ՝ ես ինչ-որ բան եմ խնդրում և ստանում եմ խնդրածս, ցանկանում մխիթարել մեկին, ինձ հաջողվում է, ուզում եմ զվարճացնել, բոլորը ծիծաղում են: Արդեն կարող ենք խոսել հաղորդակցական հաջողության և անհաջողության մասին:

Խոսքը պետք է լինի տեղին.«ոչ միշտ և ոչ բոլորի մոտ, ոչ հանուն կամ ընդդեմ ամեն ինչի, ոչ էլ ամենքի հետ կարելի է նույն կերպ խոսել»,- ասել է Ցիցերոնը:

Կարող ենք ձևակերպել մայրենիի ուսուցման այն խնդիրները, որոնք առնչվում են այս դասաժամերի հետ.

-բառապաշարի հարստացում և աշակերտների խոսքի քերականական կառուցվածքի մշակում

-լեզվական կանոնների ուսուցում և դրանց նպատակահարմար ու տեղին գործածություն

-աշակերտների խոսքային գործունեության կատարելագործում և զարգացում, այլ կերպ ասած «ճիշտ» խոսքի հիմանական հատկանիշների մշակում:

Շփում և հաղորդակցություն

Հաղորդակցությունը, շփումը մարդկանց փոխազդեցությունն է: Մարդիկ շփվում, հաղորդակցվում են ամենատարբեր նպատակներով՝

-բարևենք

-շնորհավորենք

-պարծենանք, գլուխ գովենք

-օգնենք կամ օգնություն խնդրենք

Բանավոր խոսքի զարգացման համար արդյունավետ կարող են լինել այնպիսի առաջադրանքները, որոնք հնարավորություն են տալիս երեխային հետևելու իր շրջապատին, նկատելու հետաքրքիր մանրամասները, պատմելու դրանց և իր հույզերի մասին, ասենք՝ « Օրը սկսենք բարի լուրով», «Ինչ հետաքրքիր բան եմ տեսել, լսել, իմացել, արել…» և այլն:

Երեխաներին կարելի է առաջարկել ամեն օր դպրոց կամ դպրոցից տուն գնալիս ուշադիր հետևել շրջապատին, գտնել հետաքրքիր սյուժեներ, դեպքեր, որոնց մասին հետո պիտի պատմեն դասարանում: Արդեն 2-րդ դասարանից սկսած՝ երեխաների բանավոր հաղորդակցական կարողություններին զուգահեռ պետք է շեշտը դնել նաև գրավոր հաղորդակցական կարողությունների զարգացման վրա: Կարելի է երեխաներին առաջարկել գրի առնել օրվա հետաքրքիր իրադարձությունները: Յուրաքանչյուր օրվա մայրենիի ժամի առաջին 5-6 րոպեները տրամադրվում են «օրվա լուրերին», որի ընթացքում երեխաներից 5-6-ը կարող են պատմել իրենց նորությունները:

Մարդիկ շփվում են նաև իրենց ուրախությունն ու տխրությունը, հիացմունքն ու զարմանքը, հրճվանքն ու ափսոսանքը, վախն ու անհաջողությունը կիսելու համար: Առաջարկում են մի շարք առաջադրանքներ.

-Քո տրամադրության գույները

-Մեր տրամադրության ներկապնակը

-Սիրում եմ- Չեմ սիրում

-Այսօր իմ ծնունդն է…

Բարեկիրթ ձևով օգնություն խնդրելը, օգնություն առաջարկելը կարևոր կարողություններ են, որոնք պետք է սովորեցնել՝

-«Խնդրում եմ՝ այս գումարը փոխանցեք»

-«Տատ ջան, շատ եմ խնդրում, գաթա կթխես»

Հաղորդակցության տեսակները

Շփումն ու հաղորդակցումը կարող են լինել.

-խոսքային կամ ոչ խոսքային

-բանավոր կամ գրավոր

-միջանձնային կամ զանգվածային

-մտերմիկ կամ գործնական, պաշտոնական

Երեխաները պետք է սովորեն ոչ միայն տարբերակել, այլ, որ ավելի կարևոր է, ակտիվորեն, տեղին ու արդյունավետորեն օգտագործեն շփման ու հաղորդակցության տարբեր ձևեր: Տարրական դպրոցի տարբեր դասարաններում նպատակահարմար է շեշտը դնել շփման ու հաղորդակցության տարբեր տեսակների վրա և աշխատանքներն այնպես կազմակերպել, որպեսզի առաջադրանքներն ապահովեն այս կամ այն կարողության ու հմտության աստիճանական զարգացումն ու խորացումը:

1.Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցություն

Ցույց տալու համար, որ մտքեր, ասելիք, հույզեր ու զգացմունքներ հաղորդում և ընկալում ենք ոչ միայն բառերով, այլ երեխաներին առաջադրանքների մի շարք կարելի է առաջարկել.

-Ինչպես ճանաչել տրամադրությունը.

Ուսուցիչն առաջարկում է մտածել այն մասին, թե ինչպես են հասկանում իրենց շրջապատող մարդկանց տրամադրությունը: Ինչպես և ինչից են հասկանում, որ մայրիկը բարկացած է: Քննարկում են բանավոր:

-Բաժանիր ժպիտդ ամենքին.

Ուսուցիչն կարող է երեխաներին հանձնարարել տանը նկարել «ժպիտի դիմանկարը»: Կարող են նկարել առանձին թղթերի վրա և դասարանում « Մեր ժպիտները» ցուցադրություն կազմակերպել:

-Առանց խոսքի.

«Գուշակիր բառը»

Որպես առաջադրանքի զարգացում՝ ուսուցիչը կարող է կազմակերպել «Գուշակիր բառը» խաղը: Սա հայտնի «Մնջախաղի» մի տեսակ է:

2. Բանավոր կամ գրավոր հաղորդակցություն.

Երեխան դպրոց է գալիս մայրենի լեզվի բանավոր խոսքին արդեն ազատ տիրապետելով: Դպրոցում պետք է զարգացնի այն, տիրապետի գրավոր խոսքին: Բանավոր խոսքը հաղորդակցության միջոց է, նրանց բնական կենսաձևն է: Նրանք բանավոր խոսքի միջոցով՝

ա. մտքեր են փոխանակում

բ. նոր գիտելիքներ են ձեռք բերում

գ. համատեղ գործեր են անում

դ. կարգավորում են իրենց և ուրիշների վարքը

Մինչդեռ գրավոր խոսքը միջնորդավորված է: Այն հաղորդակցություն է տարածության և ժամանակի մեջ, ուստի երեխաները պետք է հասկանան նաև գրավոր հաղորդակցության անհրաժեշտությունը: Դրա համար պետք է ստեղծել իրավիճակներ: Թե գրավոր և թե բանավոր խոսքի յուրացումը ոչ միայն բառեր, ուղղագրության կամ քերականական գիտելիքներ պիտի հաղորդի երեխային, այլ զարգացնի նրա բանավոր և գրավոր հաղորդակցական կարողությունները:

Գրավոր խոսքը երեխան պետք է սովորի կիրառել ոչ միայն արտագրություններ անելու, առաջադրանքներ գրելու, այլ նաև այն բանի համար, որ հայտնի իր կարծիքը, իր տեսակետը, իր վերաբերմունքը: Դա կնպաստի, որ նա ավելի ազատ, ինքնուրույն ու ինքնավստահ լինի:

-Ինչպես խոսել մարդու հետ, երբ նա կողքիդ չէ. /հաղորդակցում տարածության մեջ/

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է մի իրավիճակ, երբ մեծերը տանը չեն, իսկ ինքը պետք է տնից դուրս գա: Ինչպես կարող է տեղյակ պահել նրանց: Երեխաները տարբերակներ են ասում և որոշում, թե դրանցից որն է գրավոր, որը բանավոր:

Օրինակ՝

-զանգահարել և հայտնել հեռախոսով / բանավոր/

-հաղորդակցություն թողնել հեռախոսի ինքնապատասխանիչին / բանավոր/

-գրություն թողնել խոհանոցի սեղանին /գրավոր/

-հաղորդագրություն ուղարկել մայրիկի բջջային հեռախոսին /գրավոր/

3. Մտերմիկ, պաշտոնական կամ գործնական հաղորդակցություն

Հաղորդակցության բնույթը կախված է այն բանից, թե ինչ նպատակով, ինչ պայմաններում ենք հաղորդակցվում, ում հետ, որտեղ, ինչ պայմաններում ենք շփվում: Նույն բանը տարբեր մարդկանց նույն կերպ չենք ասում. ընկերոջը պատմելիս կկիրառենք մտերմիկ հաղորդակցություն, իսկ ուսուցչին պատմելիս՝ պաշտոնական:

4.Միջանձնային, խմբային և զանգվածային հաղորդակցություններ

Երեխաներին պետք է ծանոթացնել նաև հաղորդակցության այս տեսակներին՝

-միջանձնային հաղորդակցություն / ընկերների զրույց, ուսուցչի և աշակերտի զրույց/

-խմբային հաղորդակցություն / ընտանեկան զրույց, ծնողական ժողով/

-զանգվածային հաղորդակցություն /թերթերի, ամսագրերի թողարկում, հանրահավաք/

ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաղորդակցական իրավիճակներ

Խոսքային վարքը կարող է շատ բան ասել շփվողներին, նրանց կրթվածության, դաստիարակվածության մասին: Արդյունավետ շփման ու հաղորդակցման կարողությունների ձևավորումը մայրենիի դասերի ամենակարևոր արդյունքներից մեկն է: Դա նշանակաում է ծանոթացնել երեխաներին հաղորդակցման իրավիճակների հետ, բացատրել, որ՝

-շփումը մարդկանց համագործակցության միջոց է

-կարևոր է շփման ընթացքում հաշվի առնել նրան, ում հետ շփվում , հաղորդակցվում ենք, ում հասցեագրում ենք խոսքը

-պետք է հստակ գիտակցել մեր հաղորդակցական խնդիրը և ձգտել հասնել դրան

-հարկավոր է կարողանալ վերլուծել խոսքային վարքը, որոշել նրա հաղորդակցական նպատակը

Արդյունավետ շփվելու կարողությունը շատ պայմաններ է ենթադրում, որոնցից կարևոր է ճանաչել հաղորդակցական իրավիճակը, նրա բաղադրիչները: Իրավիճակներից դուրս հաղորդակցություն չի լինում: Հաղորդակցական բաղադրիչներն են.

-Ով է ասում:

-Ում է ասում/զրուցակիցներ, գործընկերներ/

-ինչի մասին է ասում/ խոսքի բովանդակությունը

-Ինչու է ասում /խնդիրը, նպատակը, մտադրությունը/

Երբեմն ոչ մի կերպ չենք կարողանում համոզել մեր զրուցակցին: Կամ երբեմն ինքնավստահ չենք լինում, ու դա խանգարում է հասկանալ մարդուն, կամ այնպես անել, որ մեզ հասկանան: Որպեսզի հասնենք մեր հաղորդակցական նպատակին, պետք է հաշվի առնենք՝

-ով է ասում

-ինչ է ասում

-ում է ասում

-ինչու է ասում

-երբ է ասում

-ինչպես է ասում

Իրավիճակին համապատասխան բառեր գտիր

Շփման ընթացքում մարդիկ ամենատարբեր նպատակներ կարող են ունենալ՝

-խնդրել

-շնորհավորել

-մխիթարել

-խրախուսել

-արդարանալ և այլն

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է տարբեր հաղորդակցական իրավիճակներ՝ հանձնարարելով հանպատրաստից խոսք կառուցել՝ իրավիճակին համապատասխան բառեր գտնելով:

Աշակերտները ուսումնասիրում են նկար-իրավիճակները, համապատասխան խոսք են կառուցում և բանավոր ներկայացնում դասարանին: Այս առաջադրանքի հիմնական նպատակն է երեխաներին սովորեցնել տարբերակել հաղորդակցական նպատակները և խոսքը կառուցել իրավիճակին համապատասխան, ինչը արդյունավետ հաղորդակցության կարևոր գրավականն է:

Երբ երեխաները ներկայացնեն իրենց խոսքը, ուսուցիչը կարող է քննարկել նրանց հետ, թե արդյոք խոսողը հասավ իր նպատակին՝ համոզեց, մխիթարեց, արդարացավ, շնորհավորեց, տեղեկացրեց և այլն:

Հաղորդակցական դերեր

-Սոցիալական դերեր

Երեխան տանը, դպրոցում, հասարակական վայրերում տարբեր դերերով է հանդես գալիս և պարզ է, որ տարբեր կերպ պիտի խոսի, հաղորդակցվի, վարվի: Շատ կարևոր է օգնել երեխաներին հասկանալու սոցիալական և հաղորդակցական դերերը, ինչպես նաև ճիշտ վարքագիծ դրսևորել:

Առաջարկվում է առաջադրանք՝

«Ով եմ ես»

Ուսուցիչը կարող է սկսել մի փոքրիկ զրույցով, որ մարդն իր կյանքում բազմազան դերեր է կատարում՝ որդի կամ դուստր, թոռնիկ, հանդիսատես, ուղևոր, դասընկեր: Եվ ամեն անգամ նա խոսում և վարվում է այդ պահի իր դերի համապատասխան: Օրինակ՝ դասարանում ուսուցչի հետ խոսում և վարվում է որպես աշակերտ, իսկ ընկերոջ հետ՝ որպես դասընկեր:

Հաղորդակցության գործընթացի մասնակիցները

Շփումը և հաղորդակցությունը երկկողմանի գործընթաց է, և շփվողները, հաղորդակցվողներն այդտեղ տարբեր դերեր են կատարում, մեկն ասում, գրում, տեղեկություն է հաղորդում /ուղարկող, հասցեագրող, հաղորդող/, մյուսը՝ լսում է, կարդում, տեղեկություններն ընդունում /ունկնդիր, ընթերցող, հասցեատեր և այլն/

«Ով ում»

Ուսուցիչը սկսում է փոքրիկ զրույցով: Շփվելու և հաղորդակցվելու համար անհրաժեշտ է երկու մարդ.

-մեկը, որն ասի, խոսի, գրի, հաղորդի

-մյուսը, որը լսի, կարդա, ստանա, ընդունի

Ուսուցիչը կարող է ցուցադրել հաղորդակցական տարբեր դերեր պատկերող նկարներ, դրվագներ, մուլտֆիլմեր, կարդալ հատվածներ հեքիաթներից և առաջարկել տարբերակել, գրել, թե որ իրավիճակում ինչ հաղորդակցական դեր է կատարում հերոսը:

Պետք է այնպիսի առաջադրանքներ առաջարկել որ երեխաները հարց ու պատասխան կաղապարի միջոցով կառուցեն երկխոսությունը:

Խոսքային ժանրեր

Տեքստը՝ որպես խոսքային հաղորդակցական գործունեության արդյունք

Մայրենիի ուսուցման ընթացքում մենք հաճախ ենք անդրադառնում տեքստին՝ պատմությունների, առարկաների, հեքիաթների և այլ գրական –գեղարվեստական նյութերի: Սակայն լեզուն նախ և առաջ կենդանի հաղորդակցության միջոց է, հետևաբար շատ կարևոր է ուսումնական տեքստերին նաև հաղորդակցական ուղղվածություն տալ, ինչը մեծապես կնպաստի երեխայի խոսքի և հաղորդակցության կարողությունների զարգացմանը:

«Խոսքային ժանրեր» բաժնում անդրադառնում ենք ոչ թե գեղարվեստական գրականության, այլ իրական խոսքում օգտագործվող ժանրերին /խնդրանք, հրաման, հրահանգ, դիմում, նամակ և այլն/: Տեքստը հանդիսանում է որպես խոսքային հաղորդակցական գործունեության արդյունք, անդրադառնում ենք հետևյալ հարցերին.

-Տեքստը և նրա առանձնահատկությունները

-Տեքստի տեսակները /պատմողական, նկարագրական, դատողական/

-Խոսքային ժանրեր /ուսումնագիտական, առօրեական, լրագրական ժանրեր/

Տեքստը և նրա առանձնահատկությունները

Տեքստը լեզվի ուսուցման, խոսքի զարգացման համար ամենակարևոր հասկացություններից մեկն է, քանի որ ցանկացած լեզվի ուսուցման գլխավոր նպատակը բանավոր և գրավոր հաղորդակցվելն է: Տեքստը հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբ է: Որպես կանոն՝ այն ունենում է վերնագիր, որը արտացոլում է թեման կամ հիմնական իմաստը:

Տեքստի և նրա հիմնական հատկանիշների մասին իմացությունը օգնում է աշակերտներին արդյունավետ ձևավորելու սեփական մտքերն ու խոսքը: Երեխան պետք է՝

-տարբերակի տեքստը նախադասությունների պարզ գումարից

-իմանա և տարբերակի՝

ա/ տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները / թեմատիկ միասնության իմաստային ամբողջականության վերնագիր, բանալի-բառեր, պարբերություններ/

բ/ տեքստի հիմնական կառուցվածքային-իմաստային մասը/սկիզբ,ընթացք, ավարտ/

1.ինչպես նախադասությունների խումբը դարձավ տեքստ.

Օրինակ՝

-Ուսուցիչն առաջարկում է երեխաներին կարդալ աշխատանքային տետրում տրված նախադասությունների երկու խումբ, որոնցից մեկը իրար հետ ոչ մի կապ չունեցող նախադասություններն են, իսկ մյուսը՝ կապակցված տեքստ: Նախադասությունների չկապակցված խմբի համար երեք նկարներ կան, իսկ տեքստի համար՝ մեկը:

Այնուհետև ուսուցիչն առաջարկում է ասել, թե ինչով են տարբերվում նախադասությունների այս երկու խումբն իրարից:

-Առաջին խմբի նախադասությունները կապված են իրար հետ և նույն բանի մասին են

Ուսուցիչն օգնում է երեխաներին հասկանալ, որ երբ նախադասությունները կապված են իրար հետ և պատմում են միևնույն բանի մասին, դրանք դառնում են մեկ ամբողջություն, որն անվանում ենք տեքստ:

Տեքստի թեման

2. Ինչի կամ ում մասին է պատմում տեքստը

Այս առաջադրանքի նպատակն է երեխաներին բացատրել թեմայի գաղափարը: Յուրաքանչյուր տեքստ ինչ որ բանի կամ ինչ որ մեկի մասին է լինում: Դա էլ հենց տեքստի թեման է: Թեման կարող է արտահայտվել նաև տեքստի վերնագրում: Թեման մեկն է, իսկ վերնագրերը կարող են շատ լինել: Օրինակ՝ «Կարդա փոքրիկ տեքստերը և որոշիր դրանցից յուրաքանչյուր թեման: Թեմաները գրի առ տրված տողերում»:

Ներկայացված են փոքրիկ տեքստեր անձրևի, ամպրոպի, կայծակի, ծիածանի մասին:

Տեքստի վերնագիր

Որպես կանոն՝ տեքստն ունենում է վերնագիր, որն արտացոլում է թեման կամ հիմնական իմաստը: Վերնագիրը կարծես տեքստի անունը լինի: Կարդում ես վերնագիրը և հասկանում ես, թե ինչի մասին է տեքստը: Օրինակ՝ «Կարդա տեքստերը, որոշիր թեմաները և ընտրիր, թե տրված վերնագրերից որը որին է համապատասխանում»:

-Հայկական հարց

-Վառարան գետնի մեջ

-Կարող ես նաև այլ վերնագիր առաջարկել:

Բարեկիրթ շփում և հաղորդակցություն

Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է նախ և առաջ բարեկիրթ շփում և հաղորդակցություն: Այն չի իրականացվում մեկ-երկու դասով:

Բարեկիրթ շփման կարողությունների հետագա զարգացումը, հղկումը և ավանդույթի ձևավորումն արդեն բոլոր դասերի և ամենօրյա շփման խնդիրներն են:

Բարեկիրթ շփման կարողությունների զարգացումը տարրական դասարաններում մի քանի խնդրի լուծում է ենթադրում.

-Տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը

-Իմանալ բարեկիրթ, սիրալիր բառեր, բառակապակցություններ

-Կարողանալ կիրառել դրանք խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան

Ուսուցիչն առաջարկում է հիշել ողջույնի, բարևի, հրաժեշտի իրենց խոսքերը, բառերն ու արտահայտությունները: Դրանք կարող են գրել գրատախտակին կամ պաստառին: Հետո քննարկում են, թե դրանցից որը երբ, ում և ինչ իրավիճակներում են ասում:

Օրինակ՝ «Բարև Ձեզ, Ողջույն, Բարի օր, Բարի երեկո, Հաջողություն, Բարի ճանապարհ, Լավ մնացեք, Մինչ վաղը, Մնաս բարով: Ուսուցչուհին առաջադրում է նախադասություններ, երեխաները ընթերցում են և ասում համապատասխան բառը:

Բարեկիրթ շփման, հաղորդակցության ժամանակ սովորաբար բարևին կամ հրաժեշտին հաջորդում են նաև որոշակի ընդունված արտահայտություններ, հարցեր, մաղթանքներ ուղված զրուցակցին:

Խաղ «Ողջունիր և հրաժեշտ տուր».

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին խաղի համար կազմել 2 շրջան իրար մեջ՝ հավասար քանակի աշակերտներով: Նրանք պետք է բարևեն իրենց դիմաց հայտնված ընկերոջը, ողջույնի բարեկիրթ արտահայտություններ փոխանակեն, ապա հրաժեշտ տան: Խաղը շարունակվում է այնքան ժամանակ, որ երեխաները հասցնեն բարևել և հրաժեշտ տալ բոլորին:

Բարեկիրթ –ոչ բարեկիրթ

Բարեկրթության և բարեկիրթ վարքի մասին զրույցը սկսելու համար ուսուցիչը կարող է գրական տեքստերից հատվածներ ներկայացնել աշակերտներին և քննարկել բարեկիրթ վարքի դրսևորումները: Նա առաջարկում է երեխաներին կարդալ աշխատանքային տետրում ներկայացված հատվածը՝ Հ. Թումանյանի «Խոսող ձուկը» հեքիաթից և գտնել բարեկիրթ և ոչ բարեկիրթ բառերն ու արտահայտությունները, հետո ոչ բարեկիրթ խոսքը դարձնել բարեկիրթ:

Խնդրել, թե պահանջել

Բարեկիրթ խոսքի և վարքի ցուցիչներից մեկը խնդրանքի բարեկիրթ արտահայտման կարողությունն է: Թեման կարելի է սկսել երեխաների հետ զրույցով հետևյալ հարցերի շուրջ.

-Ում ես սովորաբար խնդրանքով դիմում

-ինչի մասին ես խնդրում

-երբևէ պատահել է, որ քո խնդրանքը չկատարեն

-իսկ դու կատարում ես, երբ քեզնից ինչ-որ բան են խնդրում

Օրինակ՝ առաջարկում է տեքստից ընտրել մեկ խնդրանք և մեկ հրաման արտահայտող հատվածներ և փորձել փոխել դրանք՝ ըստ տրված օրինակի՝

-խնդրանքը դարձնել հրաման

-հրամանը դարձնել խնդրանք

Բարեկիրթ խոսքի առանձնահատկություններից է նաև քաղաքավարական տարբեր գրություններ գրելու կարողությունը: Տարբեր իրավիճակներ պետք է ստեղծել, որտեղ երեխաները ներողություն խնդրեն, ներկայացնեն իրենց կամ ընկերներին, ինչ-որ տեղ հրավիրեն, ընդունեն կամ մերժեն հրավերը:

Վերը նշված առաջադրանքների ճիշտ գործադրմամբ կարելի է հասնել ցանկալի արդյունքի:

Եզրակացություն

Այսպիսով, մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագրերը կարևորում են խոսքի զարգացումը: Այդ պատճառով տարրական դասարաններում մայրենիի հատկացված ժամաքանակից, որպես անհրաժեշտ բաղադրիչ շաբաթական ժամերից մեկը պետք է հատկացնել աշակերտների խոսքային կարողությունների խնդիրներին՝ այն անվանելով «Խոսք և հաղորդակցում»:

Այն նպատակ ունի մշակելու բարեկիրթ հաղորդակցման, խոսքի կուլտուրայի, արտահայտչամիջոցների դիպուկ օգտագործման, կարողությունների ձևավորման, բանավոր և գրավոր խոսքի կառուցման հմտություններ:

Դպրոց եկած երեխան ունի որոշակի բառապաշար, խոսք կառուցելու կարողություն, մտքեր արտահայտելու յուրօրինակ առանձնահատկություններ: Դրանք ձևավորվել են ընտանիքի, միջավայրի և բազմաթիվ այլ գործոնների ազդեցությամբ:

Դասվարի պարտքն է՝ մեթոդական տարբեր հնարների գործադրման միջոցով հարստացնել, օտարամուտ բառերից, հայերենին խորթ դարձվածքներից մաքրել երեխայի բառապաշարը, ձևավորել գեղեցիկ և ճիշտ խոսք կառուցելու կարողություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Գ. Թերեզյան, Կ. Թորոսյան, Հ.Խաչատրյան «Խոսք և հաղորդակցություն» 2016թ.

2.Ջուլիետա Գյուլամիրյան «Խոսքի զարգացում» 2004թ.

3.Նախաշավիղ 5-6. 2001թ.